Անդերսեն հոդված
2026/01
2026թ. հունվար 20

ANDERSEN

Հեղինակ՝

Անդերսեն թիմ

Բովանդակություն

- Նոր կարգավորումներ «Օտարերկրացիների մասին» օրենքում
- Նոր կարգավորումներ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում
- Պետական ծանուցումների թվայնացման նոր փուլ Հայաստանում
- Նոր կարգավորումներ կատարողական վարույթի վոլորտում
- Պարտադիր առողջության ապահովագրություն՝ 2026 թվականից

Andersen Alert 2026/01
January 20, 2025

ANDERSEN®

Prepared By:

Andersen Team

Content:

- New Regulation in the law on foreigners
- New Regulations in the law on the management of apartment buildings
- A new stage of digitalization of state notifications in Armenia
- New regulations on enforcement proceedings
- Mandatory health insurance starting 2026

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

2025 թվականի դեկտեմբերի 4-ին կայացած Ազգային ժողովի նիստում առաջին ընթերցմամբ ընդունվել է “Օտարերկրացիների մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ առաջարկող նախագիծը։

Նախագծով էական փոփոխություններ են նախատեսվում օտարերկրացիների՝ ՀՀ-ում աշխատանքի և կացության թույլտվություններ ստանալու կարգավորումներում, օրինակ՝ պետության կողմից սահմանվելու են կացության կարգավիճակի և աշխատանքի թույլտվության առավելագույն թույլատրելի քանակ, ամբողջությամբ վերացվելու են աշխատանքի թույլտվության տրամադրման բացառությունները, ինչը նշանակում է որ ընկերության օտարերկրյա տնօրենները, ինչպես նաև հիմնադիրները (ընկերությունում աշխատանքային գործունեություն իրականացնելու դեպքում), պարտավոր են ստանալ աշխատանքի թույլտվություն՝ անկախ ընկերությունում նրանց բաժնեմասնակցության չափից, ինչպես նաև ունենալ կացության կարգավիճակ։ Նախագծի ընդունման պարագայում փոփոխությունները ուժի մեջ կմտնեն 2026 օգոստոսի 1-ից։

Փոփոխություններին առավել մանրամասն կանդրադառնանք առանձին իրավաբանական ակնարկով։

NEW REGULATIONS IN THE LAW “ON FOREIGNERS”

At the session of the National Assembly held on December 4, 2025, the draft law proposing amendments to the RA Law “On Foreigners” was adopted at the first reading.

The draft introduces significant changes to the regulations governing employment and residence permits for foreign nationals in Armenia. In particular, the state will establish maximum allowable quotas for residence statuses and work permits. If adopted, all exemptions from the requirement to obtain a work permit will be completely abolished, meaning that foreign directors of companies, as well as founders (if they carry out employment activities within the company), will be required to obtain a work permit regardless of the size of their shareholding, and must also hold a residence status. In case the draft is adopted, then the amendments will enter into force on August 1, 2026.

We will address the amendments in greater detail in a client note.

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ «ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

2026 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով համալրվել է բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում նոր կառուցվող կամ արդեն կառուցված բազմաբնակարան շենքի կառուցապատողի իրավունքները և պարտականությունները։

Մասնավորապես, ի թիվս այլ փոփոխությունների, կառուցապատողին տրվել է իրավունք՝ մինչև շենքի բնակիչների կողմից կառավարման մարմնի

NEW REGULATIONS IN THE LAW "ON THE MANAGEMENT OF APARTMENT BUILDINGS"

As of January 1, 2026, the Law “On Making Amendments and Addenda to the Law on the Management of Apartment Buildings” has entered into force. This law introduces new provisions regarding the rights and responsibilities of developers in the field of managing newly constructed or already completed apartment buildings.

In particular, among other changes, the law grants developers the right to independently select a

ընտրությունը, ինքնուրույն ընտրելու բազմաբնակարան շենքի կառավարման մարմին։

Միաժամանակ, օրենքով կառուցապատողի վրա դրվել են մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝ կառավարման մարմնի ընտրությունից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կառուցապատողը պարտավոր է շենքի նախագծային փաստաթղթերի ամբողջական փաթեթը փոխանցել կառավարման մարմնին. նշված փոխանցումը պետք է ամրագրվի հանձնման–ընդունման ակտով, իսկ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կառուցապատողը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել համապատասխան համայնքի ղեկավարին։

Կառուցապատողի պարտականությունների հստակեցման շրջանակում համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում։

Մասնավորապես, օրենքով սահմանված ժամկետում և կարգով բազմաբնակարան շենքի կառավարման մարմնին և համայնքի ղեկավարին նախագծային փաստաթղթերի փաթեթը և դրանց փոխանցման վերաբերյալ հանձնման–ընդունման ակտը չփոխանցելու դեպքում կառուցապատողի նկատմամբ նախատեսվում է 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանք։ Եթե նշված իրավախախտումը տուգանքի կիրառման պահից վեց ամսվա ընթացքում չի վերացվում, ապա նախատեսվում է նաև 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանք։

Ավելին՝ հղումով։

management body for the apartment building prior to the election of a management body by the residents.

At the same time, the law imposes several obligations on the developer. Specifically, within 5 working days following the election of the management body, the developer is required to transfer the complete package of design documentation of the building to the newly elected management body. This transfer must be formalized with a handover-acceptance act, and one copy of this act must be submitted to the head of the respective community within 3 working days.

To ensure clarity regarding the developer’s obligations, corresponding amendments and additions have also been made to the Code of Administrative Offenses of the Republic of Armenia.

Specifically, failure to submit the design documentation package and the handover-acceptance act to the building’s management body and the community head within the timeframe and manner prescribed by law will result in an administrative fine of 200,000 AMD.
If the violation is not rectified within six months from the date the fine is imposed, an additional fine of AMD 400,000 AMD is stipulated.

For more details, see the link.

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

A NEW STAGE OF DIGITALIZATION OF STATE NOTIFICATIONS IN ARMENIA

Հայաստանի կառավարությունը, հիմք ընդունելով «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքը, նախաձեռնել է «eNotify» կենտրոնացված համակարգի ներդրումը, որը հանդիսանում է 2022-2026 թվականների դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության մաս.

Ըստ նոր կարգի՝

1. իրավաբանական անձանց ծանուցումները կտեղադրվեն հարկային մարմնի հաշվետվությունների համակարգի անձնական էջում, իսկ
2. ֆիզիկական անձանց ծանուցումները կիրականացվեն նրանց պաշտոնական էլեկտրոնային փոստին։

Ծանուցումը կարդալու, կից փաստաթղթերը դիտելու կամ բեռնելու ճշգրիտ ժամանակը և բուն ծանուցումները համակարգում պահպանվելու են առնվազն 5 տարի ժամկետով, իսկ պետական այն մարմինները, որոնք չունեն սեփական ծանուցման համակարգեր, ծանուցումներ կատարելու համար մուտք են ստանալու «ԷԿԵՆԳ» էլեկտրոնային կառավարման համակարգին։

Այն դեպքերում, երբ անհատական ծանուցման եղանակները սպառվել են, կիրականացվի ավտոմատ հրապարակային ծանուցում azdarar.am կայքում։ Կայքում տեղադրված ծանուցումները հանրությանը հասանելի կլինեն 3 տարի, որից հետո կփոխանցվեն արխիվ։

The Government of Armenia, based on the Law “On Public and Individual Notification via the Internet,” has initiated the implementation of the centralized “eNotify” system, which forms part of the 2022–2026 Judicial and Legal Reforms Strategy.

According to the new procedure:

1. Notifications to legal entities will be delivered via their personal page in the tax authority’s reporting system, and
2. Notifications to individuals will be sent to their official email address.

The exact time of reading the notification, as well as of viewing or downloading any attached documents, along with the notifications themselves, will be stored in the system for at least 5 years. As for state bodies that do not have their own notification systems, they will be granted access to the EKENG e-Governance system for the purpose of sending notifications.”

In cases where individual notification methods are exhausted, an automated public notification will be published on azdarar.am. Notifications posted on the site will be publicly available for three years, after which they will be transferred to the archive.

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

2026 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ «Օրենք»)՝ փոխարինելով նախկինում գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, որով հիմնովին վերանայվել է կատարողական վարույթի ոլորտը կարգավորող իրավական դաշտը։

NEW REGULATIONS ON ENFORCEMENT PROCEEDINGS

As of January 1, 2026, the Law of the Republic of Armenia “On Enforcement Proceedings” (hereinafter, the “Law”) has entered into force, replacing the previously effective Law of the Republic of Armenia “On Compulsory Enforcement of Judicial Acts”, thereby fundamentally revising the legal framework governing the field of enforcement proceedings.

Համաձայն Օրենքի՝

Կատարողական վարույթը ամբողջությամբ թվայնացվելու է, ներդրվել են էլեկտրոնային հարցումների և տվյալների փոխանակման նոր մեխանիզմներ, իսկ էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման դիմում ներկայացնելու համակարգը ներդրվելու է մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:

Փոխվել է կատարողական ծախսերի հաշվարկման մեխանիզմը, որը կախված է ոչ միայն բռնագանձման ենթակա գումարի չափից, այլև կոնկրետ վարույթի շրջանակում կատարված կատարողական գործողությունների ծավալից և առանձնահատկություններից:

Օրենքով նախատեսվել է կատարողական վարույթի շրջանակում հարցումների իրականացման և պարտապանի գույքի/դրամական միջոցների տարբեր տեսակների վրա բռանագանձման տարածման մեխանիզմներ, մասնավորապես՝ անհաշիվ փոխանցումների, ընդունված սակայն չգրանցված ժառանգական գույքի, անժառանգ գույքի, անհատական պահատուփերում գտնվող գույքի վճարահաշվարկային կազմակերպություններում, օնլայն խաղային և նմանատիպ այլ հարթակներում պահվող դրամական միջոցների, ինչպես նաև թվային ակտիվների նկատմամբ:

Ավելին՝ մեր կողմից առավել վաղ ներկկայացված իրավաբանական ակնարկով:

According to the Law:

Enforcement proceedings will be fully digitized, with new mechanisms introduced for electronic inquiries and data exchange. A system for submitting enforcement applications electronically is scheduled to be implemented by September 1, 2026.

The methodology for calculating enforcement costs has been revised, which will now depend not only on the amount subject to enforcement but also on the scope and specific characteristics of enforcement actions performed within the proceedings.

The Law establishes mechanisms for conducting inquiries and applying enforcement measures over various types of a debtor's assets and monetary funds, including, in particular, unaccounted transfers, accepted but unregistered inherited property, intestate property, assets held in safe deposit boxes, funds in payment and settlement institutions, funds in online gaming and similar platforms, as well as digital assets.

For more details, see the previously submitted client note.

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻՑ

2026 թվականի հունվարի 1-ից գործարկվել է ՀՀ քաղաքացիների առողջության համընդհանուր ապահովագրական համակարգը, որի շրջանակում վերջիններիս աշխատավարձից պահման ենթակա ապահովագրավճարների առաջին հատկացումները ենթակա են կատարման մինչև 2026 թվականի հունվարի 20-ը:

Վճարման ենթակա ամսական ապահովագրավճարը սահմանվել է 10,800 ՀՀ դրամ:

MANDATORY HEALTH INSURANCE FROM 2026

As of 1 January 2026, the universal health insurance system for citizens of the Republic of Armenia has been launched, under which the first allocations of insurance premiums subject to withholding from their salaries are to be made by 20 January 2026.

The monthly insurance premium is set at 10,800 AMD.

200,001 ՀՀ դրամից մինչև 500,000 ՀՀ դրամ աշխատավարձ ստացողների դեպքում քաղաքացու աշխատավարձից փաստացի պահվելու է միայն 300 ՀՀ դրամ, քանի որ մնացած 10,500 ՀՀ դրամից 6,000 ՀՀ դրամը ոչ սոցփաթեթի շահառուների համար սուբսիդավորվելու է պետության կողմից, սոց.փաթեթի շահառուներին հնարավորություն է տրվելու իրենց սոց.փաթեթի շրջանակներում հասանելիք 6,000 ՀՀ դրամը ուղղել առողջության ապահովագրությանը, իսկ մնացած 4,500 ՀՀ դրամը կազմելու է «Զինապահ» հիմադրամին ուղղվող գումարների խնայողությունը։

For those earning between 200,001 and 500,000 AMD only 300 AMD will actually be withheld from the citizen's salary, as 6,000 AMD of the remaining 10,500 AMD will be subsidized by the state for non-social package beneficiaries, social package beneficiaries will be given the opportunity to direct the 6,000 AMD due within the framework of their social package to health insurance, and the remaining 4,500 AMD will constitute the saving of the funds directed to the Zinapah Foundation.

500,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000 ՀՀ դրամ աշխատավարձ ստացողների դեպքում աշխատավարձից պահվող մասը կկազմի 3.300 դրամ, իսկ մնացած 7,500 ՀՀ դրամը կվճարվի «Զինապահ» հիմադրամին վճարվող գումարի խնայողության արդյունքում։

For citizens earning between 500,000 and 1,000,000 AMD per month, 3,300 AMD will be deducted from the salary, and the remaining 7,500 AMD will be paid as a result of savings from the amount paid to the Zinapah Foundation.

Կարևոր է նաև նշել, որ շահութահարկ վճարող գործատուի կողմից իր հաշվին աշխատողների առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրական վճարները հարկման բազայի որոշման նպատակով այսուհետ համարվում են ծախս, այսինքն՝ ենթակա են նվազեցման, սակայն յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10,000 ՀՀ դրամի չափով։

It is also important to note that insurance premiums paid by a corporate income tax (profit tax) paying employer at its own expense for employees' health insurance are henceforth considered deductible expenses for the purposes of determining the taxable base, up to 10,000 AMD per employee per month (calculated for each month in which the employee earns income).

Առողջության համընդհանուր ապահովագրության ներդրումը, սակայն, չի բացառում գործատուների կողմից աշխատողներին իրենց ցանկությամբ այլ ապահովագրական փաթեթներ տրամադրելը։

However, the introduction of universal health insurance does not preclude employers from providing their employees with additional insurance packages at their own discretion.

Փոփոխություններին առավել մանրամասն կանդրադառնանք առանձին իրավաբանական ակնարկով։

We will address the changes in more detail in a client note.